# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հունիսի 2026թ. N ՄՈ/359-Ա

ք. Արմավիր

### «ՆՈՐ ԱՐՏԱԳԵՐՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2026 թվականի հունիսի 24-ի ՄՈ/348-Ա և հունիսի 25-ի ՄՈ/351-Ա որոշումները՝ «Նոր Արտագերսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում գույքի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**որոշում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին (Ա. Հակոբյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Նոր Արտագերսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Սոնիկ Արթենյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովի նախագահին (Ա. Հակոբյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և

արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ (Ա. Հակոբյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,**

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ** Подписано: GRIGORYAN ARAM 2509720082 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**Հավելված**

**Հայաստանի Հանրապետության**

**Արմավիրի մարզպետի տեղակալ**

**2026 թվականի** փետրվարի 26-**ի**

**N ՄՈ/**359 **-Ա որոշման**

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

**Հանձնաժողովի նախագահ՝**

Ա.Հակոբյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության պետ

**Անդամներ՝**

Ջ.Եղոյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

Ս. Սաֆարյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի Ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

**Հանձնող՝**

Ն. Իվանյան — «Նոր Արտագերսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող

**Ընդունող՝**

Ա. Ախբաշյան — «Նոր Արտագերսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ